



ICHD
www.ichd.org
Մարդկային
զարգացման
միջազգային
կենտրոն
International
Center for
Human
Development

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ԾՆԱԽՈՏԻ ՀԱՐԿԵՐԻ ԲԱՐՁՐԱՅՈՒՄԸ ԵՎ ԱՏՎԵՐԱԿԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՄԸ

19 Ս ա յ ա թ Ն ո վ ա , Ե ր ե լ ա ն

Հեռ.՝ +3741 58-26-38, Ֆաքս՝ +3741 52-70-82, Էլ.փոստ՝ mail@ichd.org, Ինտերնետ էջ՝ www.ichd.org


Ծխախոտի հարկերի բարձրացման հրամայականը

Ցանկացած երկրի (անկախ դրանում առկա եկամուտների մակարդակից) փորձը վկայում է, որ ակցիազային հարկի ավելացման ճանապարհով ծխախոտի գների բարձրացումն ամենաարդյունավետ միջոցն է՝ ստիպելու ծխողներին հրաժարվել մահաբեր այդ սովորույթից, ինչպես նաև կանխելու ծխողների բանակն սկսնակներով համալրելու գործընթացը: Հակածխախոտային պայքարի առաջամարտիկ համարվող երկրներում վաղուց արդեն հարկերի բարձրացման ճանապարհով ծխախոտի գների աստիճանական ավելացումը դարձել է ուղրտում իրականացվող պետական երկարաժամկետ քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը:

2000-2004թթ. ընթացքում Եվրամիության 25 երկրներում ծխախոտի իրական գներն աճել են միջինը մոտ 30 տոկոսով, այն դեպքում, երբ բնակչության իրական եկամուտների աճը կազմել է 13.5 տոկոս: Այսինքն եկամուտների աճի համեմատ ծխախոտը թանկացել է առաջանցիկ տեմպերով, ինչը լիովին տեղավորվում է բնակչության առողջության պահպանմանն ուղղված արդյունավետ քաղաքականության տրամաբանության շրջանակներում:

Հայաստանում պատկերը հակառակն է: Միայն 2000-2004թթ. ժամանակահատվածում ծխախոտի միջին իրական գները Հայաստանում ավելի քան 21 տոկոսով անկում են ապրել այն պայմաններում, երբ բնակչության իրական եկամուտները նույն ժամանակահատվածում աճել են ավելի քան 56 տոկոսով: Իբրև միտում, սա հակառակ է Եվրոպականին: Եվրոպական Միությունում ծխախոտը տարեց տարի ավելի անհասանելի է դառնում բնակչության, հատկապես դրա առավել խոցելի խմբերի համար, իսկ Հայաստանում ճիշտ հակառակը՝ մահաբեր ապրանքն ավելի ու ավելի մատչելի է դառնում բոլորի, այդ թվում՝ հատկապես աղքատների, երիտասարդների ու երեխաների համար:

Ծխախոտի միջին իրական գների և բնակչության իրական եկամուտների փոփոխությունը հինգ տարվա ընթացքում, Եվրամիության երկրների միջինը և Հայաստան, 2000-2004թթ.:



Աղբյուրը. Եվրամիության երկրների համար՝ Եվրոստատ app.eurostat.cec.eu.int, Հայաստանի համար՝ ՀՀ ԱԿԾ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» 2004, 2005

Տեսության և այլ երկրների փորձի հիման վրա կատարված հաշվարկները¹ վկայում են, որ 1000 հատիկ ծխախոտից այսօր Հայաստանում հարկվող 5000 դրամ հարկի դրույթաչափն առնվազն 10000 դրամի հասցնելը (հարկադրույթի կրկնապատկումը) այն նվազագույն անհրաժեշտ քայլն է, որ թույլ կտա, ավելացնելով պետբյուջեի եկամուտները, քայլ անել դեպի հանրային առողջությանն ուղղված ավելի արդյունավետ քաղաքականություն:

Ստվերի մեծացման «հակափաստարկի» մասին

Քաղաքականություն մշակողները պրագմատիկ են ողջ աշխարհում, նրանք այդպիսին են և Հայաստանում: Փորձագիտական նակարդակով քննարկումները հարկային քաղաքականությունը մշակող տարբեր աստիճանի պաշտոնյաների հետ, ընդհանուր առմամբ, դրականորեն են ընդունվում վերջինների կողմից: Նրանք, որպես կանոն, ընթերցումով են արձագանքում հարկերի բարձրացման ճանապարհով ծխելու արատավոր սովորության դեմ պայքարելու անհրաժեշտության գաղափարին, ընդունում են բոլոր այն հաշվարկները, համաձայն որոնց հարկերի բարձրացումը, հանգեցնելով այդ արտադրատեսակի սպառման կրճատմանը, կբերի նաև պետբյուջեի եկամուտների աճի: Սակայն ցանկացած այսօրինակ խոսակցություն ավարտվում է «անբեկանելի» պնդմամբ՝ ստվերը կաճի...

Այո, ծխախոտը համեղ պատառ է ստվերային գործունեության տեսակյունից: Ծխախոտի ստվերային շրջանառություն գոյություն ունի ամենուր, գոյություն ունի և Հայաստանում: Ըստ փորձագիտական գնահատումների, ներկայում ծխախոտի ստվերային շրջանառությունը մեր երկրում կազմում է այդօրինակ արտադրանքի ընդհանուր սպառման մոտ 15 տոկոսը²: Որ հարկերի բարձրացումը կարող է հանգեցնել ծխախոտի չհարկվող շրջանառության ծավալների ավելացման, փաստ է: Սակայն փորձենք հասկանալ, ինչ է իրականում մշանակում այդ «կարող է»-ն:

Նախ հարկ է նշել, որ ծխախոտի հարկման ու ստվերային շրջանառության կապին առնչվող բազմաթիվ վերլուծությունները³, որ արվել են աշխարհի տարբեր երկրների էմպիրիկ տվյալների հիման վրա, հանգում են միևնույն եզրակացության. ցանկացած դեպքում (հաշվի առնելով թե՛ սպառման կրճատումը և թե՛ ստվերի ավելացումը) *ծխախոտի հարկերի բարձրացման հետևանքով բյուջետային եկամուտներն անխուսափելիորեն ավելանում են*:

Միևնույն ժամանակ պիտի շեշտել, որ ՀՀ 2006-2008թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը տնտեսության ստվերային հատվածի կրճատման և լրացուցիչ բյուջետային մուտքերի հավաքագրման հրամայականն ամրագրում է իբրև գալիք տարիների պետական քաղաքականության գերակայություն: Սա մշանակում է ամենօրյա հետևողական աշխատանք, որ կոչված է ապահովել հարկային քաղաքականության միջոցով տարբեր ոլորտներում իրականացվող պետական քաղաքականության արդյունավետությունը: Այստեղ հարկ է պարզապես չխառնել պատճառահետևանքային կապի տրամաբանությունը. հարկային քաղաքականությունը չի կարող մշակվել ստվերի դեմ պայքարի ռազմավարությունից ելնելով, այլ ճիշտ հակառակը, իսկ հարկային քաղաքականության միջոցով պետությունն իրականացնում է իր քաղաքականությունն այս կամ այն բնագավառում:

Վերոհիշյալը վկայում է այն մասին, որ ծխախոտի հարկերի բարձրացումը պիտի դիտարկել իբրև պետական ռազմավարության հանրային առողջության ոլորտում, կարևորագույն մի մոտեցում, որը ոչ միայն թույլ կտա փրկել հազարավոր մարդկային կյանքեր, այլև որդեգրված մոտեցումների տեսանկյունից կմտցնի մեր երկիրը մարդուն և մարդկային կյանքին ուղղված պետական քաղաքականության տեսանկյունից քաղաքակիրթ համարվող երկրների շարքը:

¹ Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, «Ինչու և ինչքան բարձրացնել ծխախոտի հարկերը Հայաստանում». <http://www.ichd.org/files/pdf/TobTax2.pdf>

² Amirjanyan P., Tobacco Smuggling in Armenia, 2006. <http://www.policy.hu/amirjanyan/paper.htm>

³ Օրինակ՝ Merriman D., Yurekli A. and Chaloupka F.J. How big is the worldwide cigarette smuggling problem? www1.worldbank.org/tobacco/tcdc/365TO392.PDF